Կապան համայնքի Տավրոս և Օխտար բնակավայրերի վարչական շենքերի կառուցման և տարածքների բարեկարգման շինարարական աշխատանքների

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/02

ք. Կապան «16» փետրվար 2026թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վիլաշին>> ՍՊԸ և <<Լիաշին>> ՍՊԸ համատեղ գործունեությունը(կոնսորցիում), ի դեմս <<Վիլաշին>> ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Վիլեն Հակոբյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/02 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N

596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 95400000 (իննսունհինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 15900000 (տասնհինգ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 46800000 (քառասունվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 7800000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժին՝ 48600000 (քառասունութ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 8100000 (ութ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների խախտում	10000 ՀՀ դրամ
2	շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման նորմերի խախտում	10000 ՀՀ դրամ
3	գ/կահավորման նորմերի խախտում	10000 ՀՀ դրամ
4	տեխնիկական անվտանգության նորմերի խախտում	10000 ՀՀ դրամ
5	սանիտարահիգիենիկ նորմերի խախտում	10000 ՀՀ դրամ
6	բնապահպանական(այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերի խախտում	10000 ՀՀ դրամ

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե

ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312241061
ՀՎՀՀ 09426088

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Վիլաշին>> ՍՊԸ և <<Լիաշին>> ՍՊԸ
համատեղ գործունեությունը(կոնսորցիում)
<<Վիլաշին>> ՍՊԸ
Ք.Կապան, Ռ.Մինասյան 3/3
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570078112330100
ՀՎՀՀ 09428738

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 16 » փետրվար 2026թ. կնքված
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/02 >> ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Կապան համայնքի Տավրոս և Օխտար բնակավայրերի վարչական շենքերի կառուցման և տարածքների բարեկարգման շինարարական աշխատանքների կատարման

1-ին չափաբաժին

հազ. դրամ

N	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Մեկ միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
		Հողային աշխատանքներ				
1	1--1594	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ	1000 խմ	0,2281	1175,63	268,22
2	1--1560	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում 0,5խմ շերեփի տարողությամբ կողալիցքում	1000 խմ	0,053	939,02	50,22
3	1-962 Գ=1,2	Խրամուղու վերջնամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում	խմ	13,41	7,16	96,05
4	С310-3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	433,48	2,04	882,40
5	1-1638	Գրունտի հետադարձ լիցք 96կվտ (130ձ.ու) հզորության բուլդոզերով III կարգի	խմ	53,5	0,07	3,67
6	1-969	Գրունտի հետադարձ լիցք ձեռքով III կարգի	խմ	13,4	1,73	23,19
		Ընդամենը				
		Հիմքեր				
1	8--10	Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 10.0սմ հաստությամբ	խմ	3,33	9,84	32,76

1	6--1	Նախապատրաստական շերտի կառուցում B12.5 դասի բետոնով 10.0սմ հաստությամբ	խմ	2,84	49,02	139,35
3	6-160	Միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների կառուցում Բ 20 դասի բետոնով	խմ	11,977	93,05	1114,52
7	ինֆ	Ամրան Փ 14 A III	տ	0,237	518,10	122,87
8	ինֆ	Ամրան Փ 6A I	տ	0,079	584,52	46,26
		Ընդամենը				
		Հիմնակմախք				
3	6-129	Պատերի կառուցում Բ 20 դասի բետոնով 50.0սմ հաստությամբ մինչև 3.0մ բարձրության	խմ	21,15	75,86	1604,37
4	8--22 8-25	Պատերի ջրամեկուսացում իզոգամով մեկ շերտ 4մմ	քմ	79,1	3,13	247,45
5	6--109	Շրջանակների ե/բ միաձույլ սյուների կառուցում B 20 դասի բետոնով մինչև 6,0մ բարձրությամբ U1-8 հատ, U2-1հատ	խմ	6,47	128,35	830,97
6	ինֆ	Ամրան Փ 18 A III	տ	0,356	518,10	184,44
7	ինֆ	Ամրան Փ 8A I	տ	0,0972	584,52	56,82
8	6-161	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հեծանների կառուցում Բ 20 դասի բետոնով Հ1-8հատ, Հ2-1հատ	խմ	5,79	104,23	603,68
9	ինֆ	Ամրան Փ 14 A III	տ	0,163	518,10	84,51
10	ինֆ	Ամրան Փ 6A I	տ	0,055	584,52	31,88
11	6--168	Միաձույլ ե/բ հակասեյսմիկ գոտու կառուցում Բ 15 դասի բետոնով	խմ	4,22	81,82	344,94
12	ինֆ	Ամրան Փ 14 A III	տ	0,184	518,10	95,33
13	ինֆ	Ամրան Փ 6A I	տ	0,055	584,52	32,23
14	6--170	Միաձույլ ե/բ բարավորների կառուցում B 20 դասի բետոնով	խմ	0,35	105,85	36,84
15	ինֆ	Ամրան Փ 14 A III	տ	0,03	518,10	15,17
16	ինֆ	Ամրան Փ 6A I	տ	0,004	584,52	2,36
17	6-173	Ե/բ միաձույլ ծածկի իրականացում B25 դասի բետոնով	խմ	8,11	91,27	740,18
18	Ինֆ	ԱմրանՓ12 A-III	տն	0,297	511,46	151,90
19	ինֆ	Ամրան Փ 8A I	տն	0,130	584,52	75,99
		Ընդամենը				
		Պատեր				

2	8--140	Արտաքին պատերի կառուցում 40,0 սմ հաստությամբ խարամաբետոնե բլոկներով 400x200x200	խմ	28,16	33,53	944,17
3	8--59	Պատերի ամրանավորում	տն	0,144	91,04	13,11
4	Ինֆ	Ամրան Փ10 AC 500	տն	0,070	541,34	37,89
5	ինֆ	Ամրան Փ 6A I	տն	0,074	584,52	43,25
1	6--1	Նախապատրաստական շերտի կառուցում B15 դասի բետոնով 15.0սմ հաստությամբ պատերի հիմքերում	խմ	0,46	51,05	23,38
6	8--140	Ներքին պատերի կառուցում 20,0 սմ հաստությամբ խարամաբետոնե բլոկներով 400x200x200	խմ	4,26	33,53	142,71
7	8--169	Միջնորմների կառուցում 100մմ հաստությամբ (400x200x100)	քմ	38,29	4,91	187,90
8	8--59	Ներքին պատերի ամրանավորում	տն	0,2012	91,04	18,31
9	ինֆ	Ամրան Փ 6A I	տն	0,1304	690,80	90,08
10	ինֆ	Անկյունակ 50*4մմ	մ	5,80	1,82	10,56
11	ինֆ	Փրփրապլաստ 5.0սմ հաստությամբ	քմ	7,0	0,37	2,59
		Ընդամենը				
		Պատուհաններ				
1	ինֆ.	Պատուհանների տեղադրում մետաղապլաստե, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, բացվող հայկական պրոֆիլ կամ համարժեք	քմ	9,99	35,71	356,71
2	ինֆ.	Նույնը չբացվող	քմ	6,75	24,17	163,15
3	10-104	Պատուհանագոգերի տեղադրում	քմ	16,74	0,98	16,41
4	ինֆ.	Պլաստմասե պատուհանագոգեր 30սմ լայն.	մ	11,10	3,82	42,38
5	15-78	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալիկներով 170x30մմ	քմ	1,581	17,65	27,90
		Ընդամենը				
		Դռներ				
1	ինֆ.	Ալյումինե դռների մոնտաժում սպիտակ, 46մմ հաստ. ջերմակամուրջով ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր) Դ-1 2հատ	քմ	3,78	126,35	477,59
2	ինֆ.	Ալյումինե դռների մոնտաժում սպիտակ, 46մմ հաստ. առանց ջերմակամուրջի	քմ	10,08	83,50	841,66

		ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր) Դ-2 3հատ, Դ-3 3հատ				
3	ինֆ.	Ալյումինե մտոցի մոնտաժում սպիտակ, 46մմ հաստ. ջերմակամուրջով ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր)	քմ	0,81	126,35	102,34
4	9--34	Մետաղական դռների մոնտաժում Դ-4 1հատ	քմ	1,80	129,19	232,55
		Ընդամենը				
		Տանիք				
1	6--83	Վրադիր էլեմենտների տեղադրում	տ	0,0783	387,08	30,31
2	ինֆ.	Թիթեղ 200x200x10մմ	քմ	0,72	59,26	42,66
3	ինֆ.	Ամրան Փ14 A III	տն	0,0218	518,10	11,29
4	9--69	Մետաղական ֆերմաների մոնտաժում ուղիղ կտրվածքի խողովակներից 6հատ	տ	0,506	82,11	41,53
5	ինֆ.	խողովակ N 60x40x3,0 պրոֆիլի	մ	86,28	2,67	230,11
6	ինֆ.	խողովակ N 40 x 40 x3,0 պրոֆիլի	մ	36,52	2,18	79,73
7	ինֆ.	Թիթեղ 200x100x5մմ	քմ	0,36	31,53	11,35
8	9-24	Տանիքի ծածկույթի կառուցում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով 0,5մմ հաստությամբ ԿՊ 21-0,5	քմ	104,19	9,25	963,88
9	12-280	Գագաթագծի ծածկում ցինկապատ գունավոր թիթեղից 0,55մմ հաստ.	քմ	11,53	6,00	69,17
10	12-280	Արցունքաթափ ցինկապատ գունավոր թիթեղից 0,55մմ հաստ.	քմ	16,40	6,00	98,38
11	ինֆ.	Ջրամեկուսիչ թաղանթի տեղադրում տանիքի ցինկապատ թիթեղի տակ	քմ	104,90	0,36	37,63
12	9--37	Քիվային մասի երեսապատում ալյուկաբոնդից	քմ	7,84	29,29	229,60
13	12-279	Տանիքի կախովի ջրորդանների (ճոռ) կառուցում ցինկապատ գունավոր թիթեղից 0,55մմ հաստ.	գծմ	40,0	8,49	339,73
14	8-195 վեր	Ջրորդան խողովակների տեղադրում գունավոր ցինկապատ թիթեղով 0,55մմ հաստությամբ ուղղանկյուն կտրվածքի	գծմ	7,5	6,85	51,36
15	ինֆ	Ձագար	հատ	3,0	4,92	14,75
16	ինֆ	Ծունկ	հատ	6,0	1,99	11,96
17	12-284	Ջերմամեկուսացում հանքային բամբակով 5սմ	քմ	98,56	2,68	263,69
18	12-286	Ջերմամեկուսացում փրփրապլաստով 5սմ հաստությամբ	քմ	98,56	0,92	90,49
25	10-71	Տանիքի ձեղնահարկի պատուհանի կառուցում մետաղապալստե 60մմ պրոֆիլից	հատ	2,0	42,19	84,37
20	7-767	Տանիքի ձեղնահարկի մետաղական տարրերի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,147	113,60	16,68

21	ինֆ	խողովակ 40x40x3	մ	27,68	2,18	60,43
22	ինֆ	խողովակ 60x40x3	մ	12,52	2,67	33,39
23	9-88	Մետաղական կոնստրուկցիաների (կավարամած,ծպեղնաոտքեր) կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով	տն	1,057	95,63	101,08
24	ինֆ.	խողովակ N 60x40x3,0 պրոֆիլի	մ	45,68	2,67	121,83
25	ինֆ.	խողովակ N 40 x 40 x3,0 պրոֆիլի	մ	256,1	2,18	559,11
9	12-280	Ձնապաշտպան արգելքների տեղադրում գունավոր 0,55մմ հաստ.	քմ	11,53	6,00	69,17
27	12-280	Տանիքի ձեղնահարկի կողերի երեսապատում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով 0,55մմ	քմ	0,70	6,00	4,20
28	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ հակակոռոզիոն ներկով	քմ	80,86	1,53	123,78
	Ընդամենը					
	Հատակ					
1	11--6	Խճի նախաշերտի իրականացում 10,0սմ հաստությամբ	խմ	6,86	16,84	115,59
2	11--11	Բետոնե նախաշերտի կառուցում B 12,5 դասի բետոնով 5,0 հաստությամբ	խմ	1,67	50,73	84,64
2	11--11	Բետոնե հատակի կառուցում B 20 դասի բետոնով 6,0 հաստությամբ	խմ	4,23	55,46	234,59
3	6--86	Հատակի ամրանավորում մետաղական ցանցով Bp 3 200x200	տ	0,041	26,39	1,08
4	ինֆ	Մետաղական ցանց Bp 3 200x200	քմ	70,5	0,42	29,56
5	11-55 11-56	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	105,8	1,95	206,28
6	11--14	Ջրամեկուսիչ շերտի կառուցում իզոգամով և բիտումով 4մմ	քմ	76,00	5,03	382,02
7	11--191	Լամինաթե հատակների կառուցում 8մմ հաստությամբ (շրիշակով, սպունգով)	քմ	24,05	5,74	138,00
8	11-135	Հատակների կառուցում կերամոգրանիտե 600x600մմ	քմ	45,09	10,18	458,82
9	11-252	Կերամոգրանիտե սալիկներով հատակի շրիշակների կառուցում 10սմ բարձրությամբ	գծմ	33,80	1,42	47,88
10	11-135	Հատակների կառուցում կերամիկական սալիկներով (400x400)	քմ	4,72	10,85	51,23
	Ընդամենը					
		Ներքին հարդարման աշխատանքներ	-			
1	15-246-1	Պատերի սվաղում գաջե շաղախով	քմ	176,13	3,15	555,64
2	15-277-1	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջե շաղախով	քմ	11,5	7,68	88,33
3	15-258	Պատերի սվաղում ցեմենտյա շաղախով	քմ	34,24	3,86	132,26

4	15--82	Պատերի երեսապատում հախճասալիկներով (40x20սմ)	քմ	16,70	12,76	213,06
5	15-401	Փրփրապլաստե քիվերի տեղադրում առաստաղին	մ	70,40	1,62	113,84
7	9-88	Կախովի առաստաղի հիմնակմախքի կառուցում կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով	տն	0,3157	7,91	2,50
8	ինֆ.	խողովակ N 60x40x3,0 պրոֆիլի	մ	16,00	9,23	147,66
9	ինֆ.	խողովակ N 40 x 40 x3,0 պրոֆիլի	մ	72,80	10,55	767,83
10	10--64	Կախովի առաստաղի կառուցում ջրակայուն գիպսակարդոնե սալիկներով 12.5մմ հաստությամբ	քմ	73,52	5,22	383,96
11	15--664	Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	187,6	2,82	529,50
12	15--665	Առաստաղի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	73,62	3,23	237,53
		Ընդամենը				
		Արտաքին հարդարման աշխատանքներ	-			
1	15-224	Արտաքին պատերի սվաղում դեկորատիվ ց/ավազե շաղախով	քմ	93,7	5,19	486,73
2	15-304	Մետաղական ցանցի ամրացում պատերին ВР d=3,0մմ բջիջը 100x100մմ	քմ	10,4	1,30	13,56
3	13-148	Արտաքին պատերի ցոկոլային հատվածի երեսապատում բազալտե սալիկներով 30 մմ հաստությամբ	քմ	10,40	20,61	214,36
4	15-210	Պատուհանների և դռների արտաքին շեպերի սվաղում ցեմենտավազե շաղախով մինչև 20 սմ լայնությամբ	գծմ	44,9	0,93	41,82
5	Р14-345 Р14-380	Պատուհանների և դռների արտաքին շեպերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով	քմ	8,98	1,53	13,74
6	3-100 վեր	Բազալտե թասակների տեղադրում (100x30մմ)	գծմ	37,70	8,11	305,58
		Ընդամենը				
		Մուտքի աստիճաններ				
1	11--6	Խճի նախաշերտի իրականացում 10,0սմ հաստությամբ	խմ	0,48	16,84	8,03
2	11--11	Նախապատրաստական շերտի կառուցում В 15 դասի բետոնով հաստությամբ	խմ	0,88	53,53	47,29
3	5-133 վեր	Աստիճանահարթակների երեսապատում բազալտե սալիկներով 3,0 սմ հաստությամբ	քմ	4,20	13,03	54,76
4	15-77	Աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով 2.0 սմ հաստությամբ	քմ	1,73	20,65	35,63
		Ընդամենը				
		Թեքահարթակ				
1	11--6	Խճի նախաշերտի իրականացում 10,0սմ հաստությամբ	խմ	0,78	16,84	13,14
2	11--11	Նախապատրաստական շերտի կառուցում В 15 դասի բետոնով հաստությամբ	խմ	0,78	53,53	41,75
3	5-133 վեր	Աստիճանահարթակների երեսապատում բազալտե սալիկներով 3,0 սմ հաստությամբ	քմ	4,80	13,03	62,55
4	15-77	Թեքահարթակի երեսապատում բազալտե սալիկներով 2.0 սմ հաստությամբ	քմ	1,07	20,65	22,09
		Ընդամենը				
		Ապաստարան տանող աստիճաններ				
1	11--6	Խճի նախաշերտի իրականացում 10,0սմ հաստությամբ	խմ	0,99	16,84	16,71

2	11--11	Նախապատրաստական շերտի կառուցում B 7.5 դասի բետոնով 10.0սմ հաստությամբ	խմ	0,99	45,09	44,73
3	6--86	Հատակի ամրանավորում մետաղական ցանցով Bp 3 200x200	տ	0,0038	26,39	0,10
4	ինֆ	Մետաղական ցանց Bp 3 200x200	քմ	6,6	0,42	2,76
5	6-127	Բետոնե աստիճանների կառուցում Բ 20 դասի բետոնով	խմ	0,33	98,51	32,51
6	11-55 11-56	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	1,45	1,95	2,83
		Ընդամենը				
		Սալվածք				
1	27-87	Բազալտե եզրաքարերի տեղադրում 100x200 մմ	մ	20,5	7,72	158,31
2	27-22-1	Խճային հիմքի իրականացում h=10սմ	խմ	3,94	11,41	44,94
3	11-132	Սալվածքի ծածկի կառուցում դեկորատիվ սալիկներով 4,0սմ հաստությամբ ցեմենտավազային չոր խառնուրդով 6,0սմ հաստությամբ	քմ	39,40	9,44	371,78
		Ընդամենը				
		Ապաստարան տանող աստիճանների հովար				
1	7-767	Մետաղական կարկասի մոնտաժում 40x40x3,0 կտրվածքի խողովակներից և ամրաններից	տ	0,2523	113,60	28,66
2	Ինֆ	ԱմրանՓ12 A-III	կգ	0,80	0,51	0,41
3	ինֆ	Խողովակ 40x40x3	մ	75,09	2,41	180,90
4	9-24	Տանիքի ծածկույթի կառուցում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով 0,5մմ հաստությամբ ԿՊ 21-0,5	քմ	5,40	9,25	49,96
5	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ հակակոռոզիոն ներկով	քմ	12,01	1,53	18,39
		Ընդամենը				
		Հովար 2.1x1.5 -2հատ				
1	7-767	Մետաղական կարկասի մոնտաժում 40x40x3,0 կտրվածքի խողովակներից	տ	0,1425	113,60	16,18
2	ինֆ	Խողովակ 40x40x3	մ	42,40	2,18	92,57
3	9-24	Տանիքի ծածկույթի կառուցում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով 0,5մմ հաստությամբ ԿՊ 21-0,5	քմ	7,80	9,25	72,16
4	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ հակակոռոզիոն ներկով	քմ	6,78	1,53	10,38
		Ընդամենը				
		Հենապատ N1				
1	1--1594	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ	1000 խմ	0,041	1175,63	47,61
2	1--1560	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում 0,5խմ շերեփի տարողությամբ կողալիցքում	1000 խմ	0,008	939,02	7,51
3	1-962 Գ=1,2	Խրամուղու վերջնամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում	խմ	3,200	7,16	22,92
4	С310-3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	76,95	2,04	156,64
5	1-1638	Գրունտի հետադարձ լիցք 96կվտ (130ձ.ու) հզորության բուլդոզերով III կարգի	խմ	8,0	0,07	0,55

6	1-969	Գրունտի հետադարձ լիցք ձեռքով III կարգի	խմ	3,2	1,73	5,53
7	8--10	Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 10.0սմ հաստությամբ	խմ	1,10	9,84	10,83
8	6-93	Ե/Բետոնե հենապատի կառուցում Բ 20 դասի բետոնով 50.0սմ հաստությամբ մինչև 3,5մ բարձրությամբ	խմ	21,3	80,28	1709,94
9	ինֆ	Ամրան Փ 6A I	կգ	38,74	0,58	22,60
10	ինֆ	Ամրան Փ 8A I	կգ	39,40	0,58	22,99
11	ինֆ	Ամրան Փ 10 A III	կգ	71,18	0,54	38,47
12	ինֆ	Ամրան Փ 14 A III	կգ	124,17	0,52	64,33
13	8--27	Հիմքերի բիտումապատում երկու շերտ բիտումի մածիկով	քմ	47,000	1,14	53,69
14	15-201	Հենապատի սվաղում ց/ավազե շաղախով	քմ	27,00	2,27	61,21
15	Р14-345 Р14-380	Արտաքին պատերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով	քմ	27,00	1,53	41,30
16	3-100 վեր	Բազալտե թասակների տեղադրում (300x50մմ)	գծմ	13,90	10,50	146,00
		Ընդամենը				
		Ե/բետոնե հենապատ N2				
1	1--1594	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ	1000 խմ	0,041	1175,63	47,61
2	1--1560	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում 0,5խմ շերեփի տարողությամբ կողալիցքում	1000 խմ	0,007	939,02	6,57
3	1-962 Գ=1,2	Խրամուղու վերջնամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում	խմ	3,000	7,16	21,49
4	С310-3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	76,95	2,04	156,64
5	1-1638	Գրունտի հետադարձ լիցք 96կվտ (130ձ.ու) հզորության բուլդոզերով III կարգի	խմ	7,0	0,07	0,48
6	1-969	Գրունտի հետադարձ լիցք ձեռքով III կարգի	խմ	3,0	1,73	5,19
7	8--10	Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 10.0սմ հաստությամբ	խմ	1,7	9,47	16,11
8	6-93	Ե/Բետոնե հենապատի կառուցում Բ 20 դասի բետոնով 50.0սմ հաստությամբ մինչև 3,5մ բարձրությամբ	խմ	18,8	80,28	1509,24
9	ինֆ	Ամրան Փ 6A I	կգ	53,11	0,58	30,99
10	ինֆ	Ամրան Փ 8A I	կգ	36,16	0,58	21,10
11	ինֆ	Ամրան Փ 10 A III	կգ	75,59	0,54	40,85
12	ինֆ	Ամրան Փ 14 A III	կգ	145,22	0,52	75,24
13	6--83	Վրադիր էլեմենտների տեղադրում	տ	0,0091	387,08	3,51
14	ինֆ.	Թիթեղ 100x100x5մմ	քմ	0,12	31,53	3,78
15	ինֆ.	Ամրան Փ14 A III	տն	0,0044	518,10	2,26
26	9-121	Մետաղական ցանկապատի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,1703	97,20	16,55
27	ինֆ.	խողովակ N 60 x 30 x2 պրոֆիլի	մ	19,8	1,61	31,94
28	ինֆ.	խողովակ N40 x 40 x2 պրոֆիլի	մ	5,2	1,46	7,60
28	ինֆ.	խողովակ N30 x 30 x2 պրոֆիլի	մ	20,6	1,11	22,77

28	ինֆ.	խողովակ N20 x 20 x2 պրոֆիլի	մ	32,9	0,72	23,79
29	ինֆ.	Խողովակ 20x10x1,5մմ	մ	75,94	0,42	31,84
5	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ հակակոռոզիոն ներկով	քմ	14,05	1,53	21,51
16	8--27	Հիմքերի բիտումապատում երկու շերտ բիտումի մածիկով	քմ	66,960	1,14	76,48
17	15-201	Հենապատի սվաղում ց/ավազե շաղախով	քմ	34,00	2,27	77,08
18	Р14-345 Р14-380	Արտաքին պատերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով	քմ	34,00	1,53	52,01
19	3-100 վեր	Բազալտե թասակների տեղադրում (300x50մմ)	գծմ	20,10	10,50	211,12
		Ընդամենը				
		Ե/բետոնե հենապատ N3				
1	1--1594	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ	խմ	0,4800	1,18	0,56
2	1--1560	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում 0,5խմ շերեփի տարողությամբ կողալիցքում	խմ	1,500	0,94	1,41
3	1-962 Գ=1,2	Խրամուղու վերջնամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում	խմ	0,056	7,16	0,40
4	С310-3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	0,91	2,04	1,86
5	1-1638	Գրունտի հետադարձ լիցք 96կվտ (130ձ.ու) հզորության բուլդոզերով III կարգի	խմ	1,5	0,07	0,10
6	1-969	Գրունտի հետադարձ լիցք ձեռքով III կարգի	խմ	0,1	1,73	0,10
7	8--10	Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 10.0սմ հաստությամբ	խմ	1,1	9,84	10,53
1	6-93	Ե/Բետոնե հենապատի կառուցում Բ 20 դասի բետոնով 50.0սմ հաստությամբ մինչև 2,25մ բարձրությամբ	խմ	1	80,28	80,28
9	ինֆ	Ամրան Փ 6А I	կգ	3,45	0,58	2,01
12	ինֆ	Ամրան Փ 14 А III	կգ	13,56	0,52	7,03
13	15-201	Հենապատի սվաղում ց/ավազե շաղախով	քմ	27,35	2,27	62,00
14	Р14-345 Р14-380	Արտաքին պատերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով	քմ	27,35	1,53	41,83
15	3-100 վեր	Բազալտե թասակների տեղադրում (300x50մմ)	գծմ	10,20	10,50	107,13
		Ընդամենը				
		Ե/բետոնե հենապատ N4				
1	1--1594	Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ	1000 խմ	0,006	1175,63	7,05
2	С310-3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	10,20	2,04	20,76

